ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 57

«04» 07 2018 թ. քաղ. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐՎԱԾ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դատախազների կողմից վերադասության կարգով տրված ցուցումների օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետով, 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ)՝ հետևյալ կազմով՝

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Արմեն Մարուխյան - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ,

Աշխատանքային խմբի անդամներ՝

Անդրանիկ Մանուկյան - ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչության պետի տեղակալ,

Մնացական Շահգալդյան -	ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ,
Միեր Մկրտչյան -	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,
Գրիգոր Ամիրյան -	ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության ավագ դատախազ:

2. **Աշխատանքային խմբին՝** ստուգել 2017 թվականի և 2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում դատախազների կողմից վերադասության կարգով տրված ցուցումների օրինականությունն ու հիմնավորվածությունը և ամփոփման արդյունքների վերաբերյալ կազմված տեղեկանքը մինչև 2018 թվականի օգոստոսի 15-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ